ԳԵՆԴԵՐ

ԾԱԳՈՒՄԸ

Լատիներեն “genus” բառից.
նշանակում է ծնունդ,
ընտանիք, գեն և ցեղ:

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կնոջ և տղամարդու սոցիալապես ամրագրված, հասարակության մեջ ընդունելի վարք, որը վերագրվում է անձին՝ կախված իր կենսաբանական սեռից:

ԻՆՉՈՒ ԳԵՆԴԵՐ, ԱՅԼ ՈՉ ՍԵՌ

Սեռը կենսաբանական հատկանիշ է
և վերաբերում է բնության կողմից տրված՝ կնոջ և տղամարդու մարմինների միջև ֆիզիոլոգիական տարբերություններին: Մինչդեռ,
գենդերը սոցիալական հատկանիշ է և վերաբերում է անձի՝
հասարակության մեջ ունեցած դերին և դրսևորած վարքին, ինչպես նաև հասարակության՝ նրանից ունեցած սպասումներին:

Մեր ֆիզիոլոգիական առանձնահատկությունները չպետք է պայմանավորեն մեր հանդեպ վերաբերմունքը:
Սակայն, ցավոք, հասարակությունը, հիմնվելով մեր սեռային առանձնահատկությունների վրա, մեզ է թելադրում մի շարք նորմեր և դերեր, որոնք ստեղծում են կարծրատիպեր և հիմք հանդիսանում մեր հանդեպ գենդերային խտրականության և բռնության:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՆՈՐՄԵՐ

Հասարակության մեջ ընդունված ու լայն տարածում գտած վարքի որոշակի կանոններ և չափանիշներ, որոնք ակնկալվում են կնոջից և տղամարդուց՝ կախված նրա կենսաբանական սեռից:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐ

Տղամարդուց ու կնոջից ակնկալվող վարքային նորմերի ամբողջություն, որը սահմանվում և թելադրվում է հասարակության կողմից՝ ելնելով տվյալ ժամանակաշրջանում հասարակության մշակութային առանձնահատկություններից:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

Կարծրացած, ընդհանրացված, և հաճախ, լայն տարածում գտած պատկերացումներ՝ կանանց, տղամարդկանց և, համապատասխանաբար, նրանց դերերի վերաբերյալ: Դրանք յուրացվում են ավելի վաղ, քան երևան է գալիս սեփական կարծիքը, և դառնում են վարքի և վերաբերմունքի չգիտակցված կառավարիչներ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը սահմանափակում է անձի շահերը և իրավունքների իրացման հնարավորությունները՝ կախված նրա կին կամ տղամարդ լինելուց: Սեքսիզմը նախապաշարմունքի վրա հիմնված խտրականացնող վերաբերմունք է՝ հիմնականում ուղղված կանանց դեմ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Բռնություն անձի հանդեպ, որը պայմանավորված է վերջինիս կին կամ տղամարդ լինելով:
Բռնության այս տեսակը արտահայտում է կնոջ և տղամարդու հարաբերություններում եղած ուժային անհավասարությունը, և հիմնականում կիրառվում է կնոջ հանդեպ տղամարդու կողմից: Այդ պատճառով այս հասկացությունը հաճախ նույնացվում է «կանանց հանդեպ բռնություն» հասկացության հետ:

!

Թույլ մի՛ տուր, որ գենդերային դերերը, նորմերը և կարծրատիպերը սահմանափակեն քո ազատությունը և իրավունքները: Պայքարի՛ր գենդերային խտրականության և բռնության դեմ: Արտահայտի՛ր քո «ԵՍ»-ը:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հնարավորություններ, ինչպես նաև պայմաններ՝ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հավասարապես մասնակցություն ունենալու և սեփական կարողությունները դրսևորելու համար:

SOCIETY
WITHOUT
VIOLENCE

Vagharsyan 26, apt. 2
0012, Yerevan, RA
www.swv.am
email: team@swv.am
tel: +374 60 448192, +374 91 428192

Վաղարշյան 26, բն. 2
0012, Երևան, ՀՀ
www.swv.am
էլ փոստ՝ team@swv.am
Հեռ: +374 60 448192, +374 91 428192